

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 16/1

2 մայիսի 2012թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ « ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 11.04.2012թ-ի նիստում քննության է առնվել «Մերի Հարդի» ՍՊԸ 30.03.2012թ-ի գանգատը « ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 16.03.2012թ. թիվ 1101610 ստուգման ակտի և « ԿԱ ՊԵԿ նախագահի 26.03.2012թ-ի թիվ 002328 որոշման դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտը և որոշումը թողնվել են անփոփոխ:

Համաձայն « ԿԱ ՊԵԿ նախագահի 16.02.2012թ. թիվ 1101610 հանձնարարագրի « օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում «Մերի Հարդի» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը « օրենսդրությամբ սահմանված՝ կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված), ինչպես նաև հսկիչ-դրամակղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում 16.03.2012թ-ին կազմվել է թիվ 1101610 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 300 000 դրամ:

Ղեկավարվելով «Հսկիչ-դրամակղային մեքենաների կիրառման մասին» « օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով « ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 26.03.2012թ-ին ընդունվել է թիվ 002328 որոշումը (այսուհետ նաև որոշում)՝ ընկերության գործունեությունը 5 օրով կասեցնելու մասին:

Ստուգման ակտի 2-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ հարկային տեսուչ Արզինե Հայրապետյանի կողմից 05.03.2012թ. ժամը 16:00-ին ք.Երևան, Սայաթ-Նովա 33 2. 79 հասցեում «Մերի Հարդի» ՍՊԸ-ին պատկանող հագուստի խանութից կատարվել է գնում 12 000 դրամի չափով՝ 1 հատ դրամապանակ, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Գանձապահը գումարը մուտքագրեց ՀԴՄ, սակայն չտրամադրեց « Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված վավերապայմաններով դրամակղային չեկ, որի դարձերեսին առկա է հարկային վարչարարությանն օժանդակելու նպատակով վիճակահանության հատուկ համար:

Ստուգում իրականացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Ստուգմամբ պարզվեց, որ խախտվել են « Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կարգի 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները: Արդյունքում կիրառվել է «Հսկիչ-դրամակղային մեքենաների կիրառման մասին» « օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ մասով սահմանված տուգանքը՝ գումարով 300 000 դրամ:

«Մերի Հարդի» ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

Ակտով արձանագրված է, որ հարկային տեսուչ Արզինե Հայրապետյանի կողմից 05.03.2012թ. ժամը 16:00-ին ընկերությանը պատկանող խանութից կատարվել է գնում 12.000 դրամի չափով՝ 1 հատ դրամապանակ, որի դիմաց վճարված գումարը մուտքագրվել է ՀԴՄ, սակայն չի տրամադրվել « Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված վավերապայմաններով դրամակղային չեկ, որի դարձերեսին առկա է հարկային վարչարարությանը օժանդակելու նպատակով վիճակահանության հատուկ համար:

Նշված փաստը դիտվել է որպես ՀԴՄ-ի շահագործման կանոնների խախտում և «Հսկիչ-դրամակղային մեքենաների կիրառման մասին» « օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով տուգանք է առաջադրվել 300 000 դրամի չափով:

Հայտնում եմ, որ 2012թ. մարտի 5-ին խանութը ժամանակավոր հոսանքագրվել է, էլեկտրամատակարարումը վերականգնվելուց հետո մեքենայի անխափան աշխատանքը ստուգելու համար փոխվել է ժապավենը: Այդ պատճառով հարկային տեսչության ՀԴՄ

կտրոնը տպվել է սովորական ժապավենով, սակայն դրանից հետո՝ մինչև գնումն ավարտվելը (նույն գնորդը դրամապանակն ընտրելուց հետո՝ մինչև գումարը վճարելը, խանութում այլ ապրանքներ էր ուսումնասիրում) ՀԴՄ-ի ժապավենը փոխվել է և արդեն տպվել ու տրամադրվել է սահմանված պահանջներին բավարարող կտրոն:

Ցանկացած պարագայում ՀԴՄ կտրոն տպելու դեպքում մեքենայի հիշողության մեջ տվյալ գումարն ամրագրվում է որպես իրացում, որը փոփոխել հնարավոր չէ: Դա նշանակում է, որ ակտում նշված փաստն՝ ընկերության իրացման շրջանառության չափի ամրագրման առումով, որևէ խախտում չի ենթադրում:

Ակտով արձանագրվածը, ըստ էության, ոչ թե ՀԴՄ-ի շահագործման կանոնի խախտում է, այլ՝ շահագործման համար օգտագործվող ժապավեններին ներկայացվող պահանջների խախտում: Իսկ այդ պահանջների խախտումը և ՀԴՄ-ի շահագործման կանոնների խախտումը նույնական չեն, ինչը հաստատվում է <<Սկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին>> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով, որով դրանք հստակ տարանջատված են:

Վերոգրյալից ելնելով, գտնում եմ, որ ՀԴՄ-ի շահագործման կանոնների խախտումը բացակայում է, հետևապես <<Սկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված տուգանքը կիրառելի չէ:

Նշված խախտումը հիմք ընդունելով՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 26.03.2012թ-ին ընդունվել է թիվ 002328 որոշումը՝ ընկերության գործունեությունը կասեցնելու մասին: Քանի որ ՀԴՄ շահագործման կանոնների խախտումը բացակայում է, ուստի բացակայում է նաև գործունեությունը կասեցնելու հիմքը:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 16.03.2012թ. թիվ 1101610 ակտը և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 26.03.2012թ. թիվ 002328 որոշումը: Միևնույն ժամանակ ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի դրույթներով կասեցնել 26.03.2012թ. թիվ 002328 որոշման կատարումը՝ մինչև սույն բողոքի վերաբերյալ որոշում ընդունելը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով <Մերի Հարդի> ՍՊԸ ներկայացուցիչների և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացված փաստրկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված <<Սկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների>> 19-րդ կետի <բ> ենթակետի համաձայն, հսկիչ-դրամարկղային մեքենայի միջոցով հաշվարկներն իրականացնող պատահանատու անձը պարտավոր է ՀԴՄ-ի միջոցով տպել և գումարն (ներառյալ կանխավճարը) ստանալու պահին ապրանքի հետ միասին գնորդին, պատվիրատուին տրամադրել դրամարկղային չեկ (կտրոն), իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային վարչարարությանն օժանդակության նպատակով վիճակահանության (այսուհետ՝ վիճակահանություն) անցկացման ժամանակահատվածում՝ ժապավենի դարձերեսին հատուկ համար (համարներ) պարունակող չեկ (կտրոն):

<<Սկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն. <<Սկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման կարգի և /կամ շահագործման կանոնների խախտմամբ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման համար կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում են հարյուր հիսուն հազար դրամի չափով: Տուգանքը նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, սույն մասի առաջին պարբերությունում նշված խախտումն առաջին անգամ կրկնելու դեպքում կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է երեք հարյուր հազար դրամի չափով, և նրա գործունեությունն այդ մասով կասեցվում է 5 օրով>>:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում ակնհայտ է ընկերության կողմից ՀՀ Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված <<Սկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների>> 19-րդ կետի <բ> ենթակետով նախատեսված պահանջների խախտման փաստը: Մասնավորապես, 05.03.2012թ-ին ժամը 16:00-ին

ընկերության ք.Երևան, Սայաթ-Նովա 33 շ. 79 հասցեում գտնվող խանութից կատարվել է 12 000 դրամի գնում, որի դիմաց տրամադրված ՀԴՄ կտրոնը չի բավարարել ՀՀ Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված «Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների» 19-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պահանջներին, այն է՝ կտրոնի դարձերեսին առկա չի եղել է հարկային վարչարարությանը օժանդակելու նպատակով վիճակահանության հատուկ համար:

Ինչ վերաբերում է ընկերության ներկայացուցչի այն պնդմանը, որ մինչև գնումն ավարտվելը հաճախորդին տրվել է (սակայն արդեն երկրորդ անգամ) ՀՀ օրենսդրության պահանջներին բավարարող ՀԴՄ կտրոն, ապա այն չի կարող հիմնավոր համարվել, քանի որ ՀՀ օրենսդրության պահանջներին չբավարարող ՀԴՄ առաջին կտրոնը կատարված գնման դիմաց հաճախորդին տրամադրվել է ժամը 16:00-ին, իսկ երկրորդ կտրոնը, որը բավարարում է ՀՀ օրենսդրության պահանջներին, ընկերության կողմից տպվել է գնումը կատարվելուց մոտ 30 րոպե հետո՝ ժամը 16:29-ին: Այսինքն, չէր կարող մեկ դրամապանակի գնման պրոցեսը 29 րոպե տևել:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Ստուգման ակտը և որոշումը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատարը չպետք է մերժի այն և նրա օրինի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ